

ներում բերում է մաշտել (հնց.) «քերել, թիմարել» (այսինքն՝ քերիչով ձիուն մաքրել):

Տարբեր լեզուներում գրելը կապում է քերելու հետ, որպես «քերելով գրել, փորագրել»: Այսպես, յուն. *γράφω* «քերել, գրել», *γραφέυς*, *ինչպես եւ՝ γραμματεύς* «գրիչ (գրող, դպիր), քարտուղար», *լատ. scribere* «քերել, գրել» *scriba* «գրող, քարտուղար»: Վերջինիս հետ հնդեւրոպական նոյն արմատից են ծագում քերել, քերթել բառերը, որոնք եւս, ըստ յունարէնի, առնչուել են գրելու հետ (հմմտ. քերականութիւն «գրականութիւն», քերթող «բանաստեղծ»): Մաշտոց բառը հնում կարող էր իմաստաւորուել՝ որպէս «քերելով/գրելու գործիք» եւ «գրող, դպիր», ինչպէս ոց ածանցով ունենք գրոց «գրիչ, քերիչ, ստիլոս», ապա եւ նոյն արմատից՝ գրիչ «գրելու, փորագրելու գործիք. գրող, դպիր»: Այս մեկնաբանութեամբ նոր իմաստաւորում կարող է ստանալ նաեւ մաշտոց հասարակ անունը, որով կոչուում է Հայոց եկեղեցու ծէսերի կարգն ու աղօթքները պարունակող գիրքը: Մաշտոց-ը կարող էր իմաստաւորուել՝ որպէս ուղղակի «գիրք» այնպէս, ինչպէս գրոց նշանակում է նաեւ «գրանոց, մատենադարան, մատենաներ», որից եւ իմաստի նեղացումով «սրբազան գիրք, եկեղեցու ծիսարան»: Հայկական լեռնաշխարհում աղիւսի եւ քարի վրայ քերելով/քերծելով գրել են Մաշտոցից հազարամեակներ առաջ: Այդպէս գրելու գործողութիւնը վաղնջական ժամանակներում կարող էր կոդաւորուել մաշտ- արմատով, որից եւ՝ մաշտոց ածանցեալը:

Կարելի է տարբեր մեկնաբանութիւններ առաջարկել, թէ ինչու է մաշտոցի այդ վաղնջական բառիմաստն անհետացել՝ պահպանուելով միայն Մաշտոցի անունն եւ եկեղեցական ծիսարանի կոչման մէջ (օրինակ՝ աղիւսի կամ քարի վրայ քերելով գրելու հետ մէկտեղ այն դուրս է եկել շրջանառութիւնից՝ որպէս արխայիզմ՝ պահպանուելով միայն սրբազան գործառոյթի բառերում): Այսպիսով, մաշտոց-ը, թերեւս, «գրելու գործիք, դպիր» իմաստով վաղնջական, սրբազան գործառութիւն ունեցող մի բառ է եղել, որը դարձել է Մեսրոպ Մաշտոցի պատուաւոր մականունը: Հնում այդպէս կարող էին կոչուել դպիրները, ապա եւ դպրութեան աստուածը:

Մաշտ արմատի վերաբերեալ դժուար է կոնկրետ բան ասել: Միայն տեսականօրէն հնարաւոր է կապ պատկերացնել մաշ, մաշել բառերի հետ (տ/թ ածականով, հմմտ. քերել եւ քերթել): Ընդհանրապէս, շտ/շթ հնչիւնախմբի հանդէս գալը բնիկ հայերէն բառերում քիչ հաւանական է: Հնագոյն Հայաստանում առաւել տարածուած գիրը ուրարտական սեպագիրն էր, եւ հաւանական է արմատի ուրարտական ծագումը: Ուրարտերէն «գրել» նշանակութեամբ բառ յայտնի չէ: Ըստ Մ. Խաչիկեանի սիրալիր հաղորդման՝ Մաշտոց/Մաշթոց, մաշտել ձեւերի շտ(շթ)-ն տեսականօրէն հնարաւոր է կապել խուռա-ուրարտական *Všt* բայական ածականի հետ (V-ն կրկնում է արմատի ձայնաւորը), որը, հաւանաբար, արտայայտում է գործողութեան ուժգնութիւն կամ աւարտուածութիւն⁶⁰:

60 М. Хачикян, Хурритский и урартский языки, Ер., 1985, с. 61.

«ՀՐԵԱՅ» ԷԹՆԱՆՈՒՆԸ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ ԵՒ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ

Պարոյր Սուրադեան

Սուիրում եմ հայագետ Հայկ Պերպերեանի յիշատակին, որը երկրորդ աշխարհամարտի տարիներին փարիզաբնակ հրեաներին հայութեան վկայական էր տալիս նրանց կեանքը փրկելու համար:

Ա. Հայ-հրէական էթնիկական, պատմական, մշակութային ու լեզուական առնչութիւնները՝ պատմականօրէն վկայուած լինել-չլինելու խնդիրը վերջին ժամանակներս վերստին քննարկման առարկայ է դարձել: Փաւստոս Բուզանդի հաղորդած տեղեկութիւնները Հայաստանից մ.թ. չորրորդ դարում Պարպաստանի քաղաքներ տարագրուած հրեաների 95 հազար երգերի մասին, որոնք՝ «զայս ամենայն բազմութիւն չրէից, զոր գերեցին տարան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն Պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին, յորժամ գերեաց նա եւ ած ի Հայս զքահանայապետն չրէից զՀիւրկանոս զառաջին ժամանակաւ: Եւ էած մեծ արքայն Տիգրան զամենայն զհրէութիւնն զայն բնակեցոյց ի քաղաքսն Հայոց յԷրոււմ դարուն ի ժամանակին»¹, Մովսէս Խորենացու պատմւը, թէ՛ «անցաք ի սուրբ տեղիսն երկրպագել եւ մնալ վայրկեանի Պաղեստինացւոց հրահանգս» (Գ, 62), եւ Ստեփաննոս Օրբէլեանի հաղորդումը, Չորթմանի կողմից Կապանի Զհտաթաղի բնակչութեան կոտորման վերաբերեալ², վերջին տարիներիս Վայոց ձորում հրէական բնակավայրի յայտնաբերումն ու մասնակի պեղումները³ եւ, ի վերջոյ, զուտ

գիտական հետաքրքրութիւնը նորից կենդանացրեցին խնդրի արծարծման կարեւորութիւնը:

Ժամանակին պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը քննարկել եւ ամփոփել էր մեր մատենագրութեան՝ հրեաներին վերաբերող տեղեկութիւնները⁴, իսկ պրոֆ. Հր. Աճառեանը բարեխղճօրէն ի մի է հաւաքել հրեաների լեզուին՝ եբրայեցերէնին առնչուող բոլոր բառային միաւորները եւ կտրականապէս եզրակացրել, թէ հայերէնում առկայ եբրայիզմները միջնորդաւորուած են երրորդ լեզուով՝ ասորերէնով կամ յունարէնով (հիմնականում՝ Սուրբ Գրքի հայերէն խմբագրութեան իրողութիւններին է վերաբերում, որ հարկաւ ստոյգ է): Նրա համոզմամբ, Հայաստանում հաստատուած հրեաները արամէախօս էին, ասորախօս, ուստի՝ «Այսպիսով, եբրայերէնի ուղղակի ազդեցութիւնը հայերէնի վրայ ամբողջապէս վերանում է»⁵:

4 Л. Меликсет-Бек, Armeno-Hebraica.- "Նախորդ շրջանի յիշատակը օստրոյի յիշատակը", տձ., 1945, Ծ. III, թթ. 217-264.

5 Հր. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, II մաս, Երևան, 1951, էջ 55: Ա. Գրքի եւ եբրայական գրականութեան միջոցով հայերէն մտած բառերի (138 միատր) ցանկ. տե՛ս նոյն տեղում, էջ 55-59: Անձնանունների ցանկ՝ էջ 63-64: Ա. Գրքի եբրայերէն բնագրին հայերի անձանօթութեան Հր. Աճառեանի համոզումն այնքան անխախտ է, որ նոյնիսկ հայ. Ա. Գրքի մաքման տեղմիւնը (ծածկոց, վերմակ), (Դ թագ. Ը 15), որի դիմաց եբր. ունի makbēr, իսկ յուն.՝ μακβίρ, փոխառուած է համարում յուն. μαχμάν-ից: Բառս հայերէնից անցել է վրացերէնի՝ მაქმან

1 Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, IV, ԾԵ
2 Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն Անհագիւմ Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 334
3 M. E. Stone and D. Amit, Report on the Survey of a Medieval Jewish Cemetery in Eghegis, Vayots Dzor Region, Armenia.- "Journal of Jewish Studies", 53 (2002), 66-106.

ու վանկարարը փոխարինուել է լսող, բայց չգրող ը գաղտնավանկով:

- gumbad – գմբեթ
- dušxem – դժխեմ
- duškam – դժկամ
- dušman – թշնամի
- dumak – դմակ
- dusrav – դսրով
- durust – դրուստ
- zumurrufi – զմրուխտ
- *tumbuk – թմբուկ
- kunçit – կնճիթ
- *huzer – հզոր
- *hupatak – հպատակ
- *tuzuruk – տզրուկ
- kurkum – քրքում

Հետեւաբար՝

iüðāyā>yürāyā>hurea>հրեայ անցումը միանգամայն պատճառաբանուած է¹⁷:

բ) Հիմնաւորուած է նաեւ Հայերէն հրեայի վրացերէն շրճ/Յրճ փոխանցումը, այսինքն՝ Հայերէնի փոխառեալ բառերում ը գաղտնավանկի շ բացումը վրացերէնում: Հեռուն չգնալու համար ասենք, որ միջին դարերում Հայերէնի վրացերէն թարգմանուած վարքագրական բնագրերում ունենք՝

Հմայեակ – Յրճ/Յրճայ

Սմբատ – Նրճ/Նրճ-ո

Սրուանձտայ – Նրճ/Նրճտ(ն)

Այս խմբին կարելի է դասել նաեւ Նպատ – Նրճ/Նրճ¹⁸:

Ինչ վերաբերում է Մ. Անդրոնիկաշիլու մատնացուցած ճշմարիտ, հրապարակ եւ Բագարատ օրինակներին, նրանք փաստարկի արժէք կ'ունենային այն պա-

րագայում, եթէ Հայերէնից անկախ ու Հայերէնին անծանօթ հնչիւնափոխութիւն ներկայացնէին: Մինչդեռ նրանք երեքն էլ Հաւասարապէս ընտանի են Հայոց լեզուի պատմութեանը, հետեւաբար պահպանելու անհրաժեշտ են Հայերէնի միջնորդաւորմամբ¹⁹:

Ձ. Հայ-հրեական յարաբերութիւններին՝ անմիջական կամ միջնորդաւորուած լինելու խնդրին է առնչուած քրիստոնեայ դառնալու արարողութիւնը արտացոլող մկրտել, մկրտութիւն, մկրտիչ տերմինների ստուգաբանութեան հարցը:

Անտուան Մէյէն առաջիններից մէկն է նկատել, թէ՛ ինչպէս որ չգիտենք ակնյայտօրէն իրանական «Կարապետ (նախակարապետ - προδρομοσ) (Եբր. Զ 10)» «ինչից է ծագում», «նոյնպէս չգիտենք, թէ՛ որտեղից է ծագում մկրտելը, որը Հայերէնում ոչ մի դէպքում չի կարող բնիկ համարուել»²⁰:

Ազաթանգեղոսի արաբերէն խմբագրութեան իր յայտնաբերած տեքստը հրատարակելիս Ն. Մառը Լուսաւորիչ տերմինի ու մականուան ասորական ու վրացական լոյս համապատասխանութիւնները բերելուց յետոյ ամփոփում է. «Հայերը մինչեւ այսօր այդ նշանակութեամբ պահպանել են իրենց հին Եկեղեցուց մկրտել mθkθrt-el բայը, սեմական ծագման եզր՝ krt արմատից - թլպատել, ... կտրել»²¹:

Անցողիկ նկատենք, որ Ն. Մառի Համոզմամբ, Կարապետ տերմինը աղբրս ունի սևան՝ yerbeθ, վրաց՝ ճրթրտո բառին

19 Հիմնաւորումները տե՛ս Հր. Աճառեան, ՀԱԲ-ի համապատասխան հատորներում՝ ճշուած բառայօդուածների տակ:

20 Ա. Մէյէ, Հայագիտական ուսումնասիրութիւններ, էջ 219

21 Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов св. Григорием, СПб., 1905, стр. 152; տե՛ս նոյնի հայերէն թարգմ., էջ 89:

17 Հին ու միջին պարսկերէնից փոխառեալ բառերի ցանկ. տե՛ս Հր. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, I մաս, Երեւան, 1940, էջ 240-292:

18 ილია აბულაძე, ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა IX-X სს-ში, გამოკვევა და ტექსტები, თბ., 1944, გვ. 0113.

(աստուած)²² եւ բնաւ «ակնյայտօրէն իրանական» չէ, ինչպէս համոզուած էր Ա. Մէյէն: Գալով մկրտել տերմինին՝ Ն. Մառի բացատրութեանը Հր. Աճառեանը առարկում է նոյնքան կտրուկ, ինչպէս Հայ-հրեական միւս հնարաւոր առնչութիւններին. նա գտնում է, որ մկրտելը իրօք խորասուզել է նշանակում եւ նոյնական է մկրտել հասկացութեան հետ²³: Նա բերում է այդ վկայող խ=կ լծորդութեան 20 օրինակ²⁴ եւ մկրտելը կապում լատ. mergo-immergo (ընկղմել, լուսնալ) եւ հսլ. mokru-խոնաւ բառերի հետ եւ անստոյգ յայտարարում Ն. Մառի «կրտ»-կտրելը²⁵:

Սակայն Հր. Աճառեանը բոլորովին աչքաթող է անում մկրտել-ընկղմել-մկրտել տերմինի ծիսական-քրաբողական կիրառութիւնը, եւ ապա «մկրատ» բառն ստուգաբանելիս նա ընդունում է գրծ-կտրել արմատի գոյութիւնը եւ կապում արաբ. miqras-մկրատ բառի եւ նրանից փոխառեալ մայրաճղջլո (վրաց.) մայրաճո (թուշ.), մայրաճղջլո (մեզր.) միւսերների հետ: Բայց այժմ գիտենք, որ սեմական լեզուներից կատարուած նախաարաբական շրջանի բազում փոխառութիւններ են բերուած Ն. Մկրտչեանի վերջերս հրատարակուած բառացանկերում: Այդ նշանակում է, թէ կրտ-ը երբայերէնից բխեցնելու դժուարութիւնը վերանում է. այն ընկած է կտրել/թլպատել, կտրել, մկրտել, ի վերջոյ՝ մկրտել ծիսակարգային տերմինի հիմքում:

22 Н. Марр, Яфетический k в армянском языке, ЗВ0, т. XIX, вып. 4, 1910, с. 159; Գ. Կլիմովի վերականգնմամբ, համաքարթուսական մախաձնը պիտի լինի *yermat (տե՛ս Г. А. Климов, Этим. словарь картвельских языков, Москва, 1964, стр. 202).

23 Տե՛ս Թիրակացու «վարդապետք... մկրտեցան ի խորս գիտութեան» արտայայտութիւնը (Անանիայ Թիրակունոյ՝ Մնացորդ բանից, ի լոյս ան Բ. Պատկանեան), Ս. Պետերբուրգ, 1877, էջ 43):

24 Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1914, սիւն 564-565:

25 Տե՛ս ՀԱԲ, III, 331:

Է. Եթէ այս դիտարկումներին գումարենք Հայոց վաղեմի ներկայութիւնը Պաղեստինում, որ արտացոլուած է Հայերէն արձանագրութիւնների հնագոյն նմոշների առկայութեամբ²⁶, սուրբ Նունէի վրացերէն վարքի տեղեկութեամբ, թէ սրբուհին Հայերէն է սովորել Երուսաղէմի կուսանաց անապատի «միափոր» (նիափոր) դԱնցի Հայի մօտ²⁷, եւ խորենացու խօսքը, թէ Պաղեստինացուց մօտ մնացել է «ի հրահանգս», եւ Հայ-հրեական շփումների հնարաւորութիւնը բուն Հայաստանում, ապա կարելի է մտածել, թէ բերածս պատառիկային վկայութիւնները պատմաձշակութային ընդհանրութեան շղթայի առանձին օղակներ են, որոնց ուսումնասիրութիւնը աչքի տակ ունենալիք է: Օրինակ՝ ես վստահ չեմ, թէ հրեաների օտերէն՝ wirag յորջորջումը վրացերէն՝ Յրճ-ից է գալիս եւ ոչ թէ Հայերէն՝ վիրագ բառից, որ Հր. Աճառեանը վայրագ-ի հնչիւնափոխ տարբերակ է նկատում: Սակայն խորենացին այդ եզրի կիրառմամբ բնութագրում է Հիւսիսային Կովկասից Օշական հասած թշնամուն, որին Վահան Ամատունին «ընդ գաւակ ձիոյն հարեալ՝ յերկիր կործանեաց զահագին զվիրագն» (Գ, 9): Հարկաւ Կովկասի «միաբանեալ բնակչաց» կազմում կենտրոնական տեղ էին զբաղեցնում օս-ալանները: Յիշենք նաեւ, որ էթնանուններ կարող էին կազմուել եւ ածականներից, ինչպէս նաեւ բնակութեան տեղավայրից. 'ibri-'ibr - երբայեցի էթնանունը երբայերէնում եւ արամէերէնում «այնկողմացի, հանդիպակաց» է նշանակում, իսկ ջրճ-ն արդի վրացերէնում՝ յամառ:

26 Նկատի ունենք պրոֆ. Մ. Սթոունի հրատարակած նմոշները:

27 «Յրջլո յորտլո յադոգրափոյլո լոյթրաճրթրոն ժրջլոյն»; Մոցն I, տժ., 1964, ըջ. 110.